



ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎՍՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Այսօր արդեն վստահաբար կարելի է ասել, որ եվրասիական համագործակցությունը մեր ներկան է: 2018 թ. Հայաստանում ապրանքների ընդհանուր շրջանառության ծավալը կազմել է 7.3 մլրդ ԱՄՆ դոլար, որից 2.4 միլիարդը արտահանման ծավալն էր և 4.9 միլիարդը՝ ներկրման: Արտաքին ապրանքաշրջանառության ամենամեծ տոկոսը Եվրասիական տնտեսական միության երկրներում է՝ 1 մլրդ 989 մլն ԱՄՆ դոլար կամ 28.2%: ԵԱՏՄ ինտեգրման պարագայում աճում է Հայաստանի՝ կարևոր տրանսպորտային և տարանցիկ հանգույց դառնալու հավանականությունը: ԵԱՏՄ բոլոր երկրները շահագրգռված են, որ լինեն երկայնություն և ավտոմոբիլային տրանսպորտային միջանցքներ, նաև՝ էլեկտրացանցեր դեպի Հարավային Ասիա և Մերձավոր Արևելք: Ուստի մեր ջանքերի և հնարավորությունների համադրումը պետք է արդյունավետության առավելագույն մակարդակ ապահովի մեր երկրների տնտեսությունների հրական ոլորտների զարգացման, լոգիստիկ և տրանսպորտային դժվարությունների հաղթահարման, անվտանգության համակարգերի կայունության բարձրացման համար:

Հիմնաբառեր. Եվրասիական տնտեսական միություն, ինտեգրում, համաձայնագրեր, ազատ առևտուր, միասնական տնտեսական տարածք

JEL: O11, O19

Ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների դերն ու նշանակությունն անհրաժեշտ է զննհատել ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական,

սոցիալական, էկոլոգիական տեսանկյուններից, չպետք է թերագնահատել նաև պատմամշակութային բաղադրիչի դերը: Այսօր արդեն վստահաբար կարելի է ասել, որ Եվրասիական համագործակցությունը մեր ներկան է, բայց և միաժամանակ պետք է շատ ջանք գործադրել, որպեսզի այդ ներկան դառնա արժանապատիվ ապագա:

Հասկանալի է, որ յուրաքանչյուր երկրի խորհրդարանն ու կուսակցությունները պետք է գլխավորապես ծառայեն իրենց երկրի ազգային-պետական շահերին, և դա բնական է: Հարցը միայն այն է, թե ինչպես կարելի է այդ գործընթացն արդյունավետ կերպով համատեղել Եվրասիական տնտեսական միության երկրների ընդհանուր սոցիալ-տնտեսական շահերի հետ:

Այսօրվա արագ փոփոխվող աշխարհում միջազգային քաղաքական համակարգն ավելի բազմաբևեռ և մրցակցային է դառնում: Տնտեսական շուկաներում ավելի հաճախ գերակայում է ոչ թե ապրանքների և ծառայությունների պահանջարկը, որը բավարարվում է, այլ՝ գիտելիքի: Խոշոր ֆինանսական կառույցներն ու բանկերն այլևս ներդրումներ չեն կատարում հին տեխնոլոգիաներում (որոնց կյանքի տևողությունը 5-7 տարի է), այլ ֆինանսավորում են արհեստական ինտելեկտն ու թվայնացումը, որոնք չորրորդ արդյունաբերական հեղափոխության հիմքում են: Վերջինիս արդյունքներով պետք է հիմնվեն նաև ՀԱՊԿ անդամ պետությունների և այլ երկրների անվտանգության համակարգերը:

2018 թ. Հայաստանում ապրանքների ընդհանուր շրջանառության ծավալը կազմել է 7.3 մլրդ ԱՄՆ դոլար, որից 2.4 միլիարդը արտահանման ծավալն էր և 4.9 միլիարդը՝ ներկրման:

Արտաքին ապրանքաշրջանառության ամենամեծ տոկոսը Եվրասիական տնտեսական միության երկրներում է՝ 1 մլրդ 989 մլն ԱՄՆ դոլար կամ 28.2%, որից Ռուսաստանի բաժինը կազմում է 1 մլրդ 924 մլն, Բելառուսինը՝ 50 մլն, Ղազախստանինը՝ 13 մլն, իսկ Ղրղզստանինը՝ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար: Համեմատության համար ասենք, որ 2018 թ. Եվրամիության հետ Հայաստանի ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1 մլրդ 830 մլն ԱՄՆ դոլար կամ 24.8%:

2018 թ. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ապրանքների փոխադարձ առևտրի ծավալն աճել է 9.2%-ով: Եվրասիական տնտեսական միության արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 3,1%-ով: Աճն ավելի նշանակալից էր, քան մեկ տարի առաջ՝ 2.6%:

Փոխադարձ առևտրի ցուցանիշի աճի առաջատար երկրներն են Հայաստանը (+20,7%), Ղազախստանը (+12%): Կարևոր է նշել, որ աճում են միջանկյալ արտադրանքի առևտրի ծավալները, ինչն արտացոլում է հինգ երկրների համագործակցային կապերն ու արտադրությունների փոխլրացումը: Այսպես, մշակող արդյունաբերության մեջ համագործակցային առաքումներն աճել են 30%-ով:

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու 4-ամյա պատմության արդյունքում անդամ պետությունների հետ փոխադարձ առևտրի ծավալն աճել է: Եթե 2014 թ. Հայաստանի ապրանքաշրջանառությունը Ռուսաստանի հետ կազմել է 1 մլրդ 400 մլն ԱՄՆ դոլար, Բելառուսի հետ՝ 40 մլն, Ղազախստանի հետ՝ 7.5 մլն, ընդամենը՝ մոտավորապես 1.5 մլրդ, ապա 2018 թ. այդ թիվը մոտեցել է 2 միլիարդին:

Նշանակալից տնտեսական զարգացման համար արտադրանքի արտահանման և համախառն ներքին արդյունքի հարաբերակցությունը պետք է

հասնի 50%-ի: Ընդ որում, արտահանման մեջ պետք է գերակշռի պատրաստի արտադրանքը, հակառակ դեպքում նշանակալից առաջընթաց, հատկապես՝ փոքր տնտեսությամբ երկրներում, չի լինի, քանի որ նմանօրինակ երկրների ներքին շուկան խիստ սահմանափակ է: 2017 թ. այդ ցուցանիշը Հայաստանում կազմել է 38.1%:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանից պատրաստի արտադրանք հիմնականում արտահանվում է Եվրասիական տնտեսական միության երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստան: Հայաստան կատարվող փոխանցումների ավելի քան 63%-ը Ռուսաստանից է: Գազի 90%-ը, Հայաստանի ատոմակայանի վառելիքի 100%-ը ներկրվում են Ռուսաստանից: Հայաստանի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների շուրջ 50%-ը ռուսական ներդրումներն են:

Այդ իսկ պատճառով, մեր կուսակցությունների օրակարգի ամենաարդիական թեմաներից մեկը պետք է դառնա Եվրասիական տնտեսական միության թվային հարթակը:

Եթե սա կատարյալ տնտեսական միություն է, ապա քաղաքացիների, ապրանքների և ծառայությունների, նաև՝ ֆինանսական ռեսուրսների շարժը պետք է նույն տեմպն ունենա և կարգավորվի միութենական համաձայնագրով: Այսպես, Հայաստանի, Բելառուսի և միության այլ անդամ պետությունների սուբյեկտները պետք է անմիջական կերպով ազատորեն մասնակցեն պետական գնումների մրցույթներին:

Եթե մենք Եվրասիական տնտեսական միություն ենք, ապա դա նշանակում է ընդհանուր, հետո նաև՝ միասնական շուկա, էներգետիկ, ֆինանսական շուկա:

Հիմա, իհարկե, մենք չենք խոսում գազի և նավթամթերքի միասնական գների մասին, բայց դրանք պետք է համապատասխանեցվեն՝ հաշվի առնելով տրանսակցիոն ծախսերը, նաև՝ տեղափոխությունը, հարկերը, տարանցիկ փոխադրումը և այլն: Սա մեր օրակարգի արխիվային հարցերից մեկն է:

Եվս մեկ խնդիր, որը կարևոր նշանակություն ունի մեր հանրապետության համար և կարող է լուծում ստանալ Եվրասիական տնտեսական միության տնտեսական կոլեգիայում: 2020 թ. հունվարի 1-ին Հայաստան ավտոմեքենաների ներկրման տարանցիկ սակագների ժամկետն ավարտվում է, ինչի հետևանքով գները կաճեն 4-4.5 անգամ: Դա չի կարող դրական ազդեցություն ունենալ մեր հանրապետության սոցիալական վիճակի վրա:

Եվրասիական տնտեսական միության ներկայիս գերակայություններից է Եվրասիական ապրանքանիշի ստեղծումը: Դրա հիմքում պետք է դրվի աշխատանքի գրագետ միջազգային բաժանումը, նաև՝ սոցիալականացումն ու համագործակցությունը:

Մեր կարծիքով՝ շատ կարճ ժամանակում անհրաժեշտ է վերացնել բջջային օպերատորների ռումինգի ծառայությունը. Եվրասիական տնտեսական միության երկրներում հեռահաղորդակցման պայմանները պետք է նույնը լինեն:

Օրակարգային է նաև մասնակից երկրների գործարարների միջև ԱԱՀ-ի վերադարձման գործընթացների կազմակերպման պարզեցումը: Այսօր արտահանող երկրի տնտեսավարող սուբյեկտը չի կարողանում ստանալ ԱԱՀ-ի գումարը: Քանի դեռ ապրանքը չի վաճառվել տվյալ երկրում, ԱԱՀ չի վճարվում և չի ուղարկվում վճարումը հավաստող փաստաթուղթը: Այս հարցի լուծման համար կարելի է օգտագործել Հայաստանի փորձը, որովհետև մեր երկ-

րում արդեն երկար տարիներ է, ինչ գործում է հարկային փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության e-invoice համակարգը:

Հաջորդ կարևոր օրակարգային հարցը պարենային անվտանգության վկայագրերի փոխձանաչման համակարգի ներդրումն է, ինչը կարագացնի գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի շրջանառության ծավալների աճը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում:

Եվս մեկ կարևոր խնդիր՝ Եվրասիական տնտեսական միության գործընկերների տարածքային ընդլայնումը: Շարունակվում են բանակցությունները Հնդկաստանի, Եգիպտոսի, Սերբիայի, Իսրայելի և Սինգապուրի հետ: 2019 թ. շարունակվում են ԵԱՏՄ պետությունների ինտեգրման խորացման գործընթացները: 2018 թ. ԵԱՏՄ-ի և Վիետնամի միջև ապրանքաշրջանառությունն աճել է 12,8%-ով, արտահանումը միության երկրներից Վիետնամ աճել է 19,6%-ով: 2018 թ. հաջողվել է ընդունել ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը, որի մշակումը սկսվել էր դեռևս 2010 թ., և որը հնարավոր կդարձնի ԵԱՏՄ-ում շրջանառվելիք ալկոհոլի ազատ տեղափոխումը:

2018 թ. դեկտեմբերին ԵԱՏՄ պետությունների ղեկավարները հաստատեցին գազի և նավթամթերքի միասնական շուկայի ստեղծման ծրագրերը: Մինչև 2019-ի տարեվերջ ԵԱՏՄ երկրները կմիասնականացնեն գազի ստանդարտները (բաղադրությունը, կալորիական արժեքը մեկ խորանարդ մետրի համար և այլն) և կմշակեն բորսայում գազի վաճառքի միասնական կարգ, մինչև 2020 թ. ավարտը պատրաստ կլինեն գազի ապրանքային բորսաները, նաև հավասարապես մատչելի կդառնան գազի փոխանցման համակարգերը: Իսկ 2025 թ. հունվարի 1-ից ԵԱՏՄ երկրները անարգել կկարողանան բորսային սկզբունքով միմյանցից գազ գնել և միմյանց գազ վաճառել շուկայական գներով:

Վերջերս մեր հանրապետության խորհրդարանը վավերացրել է ԵԱՏՄ-ի և Իրանի միջև ազատ առևտրի պայմանագիրը: Խոսքն ավելի քան 850 անուն արտադրանքների մասին է, այսինքն՝ 200 մլն շրջանառությամբ շուկան ընդլայնվել է:

Վավերացվել է նաև ՉԺՀ-ի հետ առևտրի պայմանագիրը, ինչը էլ ավելի զգալի կերպով կնպաստի ԵԱՏՄ գոտու ընդլայնմանը:

Համաշխարհային տարածքների գլոբալացման գործընթացում չափազանց մեծ է մեր քաղաքական ուժերի գործունեության դերը ժամանակակից տնտեսական-քաղաքական համակարգերի արարման և կառուցման գործում, բայց մենք ազնվորեն գիտակցում ենք, որ այդ ընթացքում պահպանում ենք յուրաքանչյուր ազգի մտածողության փիլիսոփայությունը և ինքնության դրսևորումը, որովհետև տաղանդը միայն գիտելիքի գնահատումն ու տեղեկատվության կենտրոնացումը չէ, այն նաև ստեղծագործելն է, կատարելության հասնելու ջանքերը:

Այսպիսով, մեր ջանքերի և հնարավորությունների համադրումը պետք է արդյունավետության առավելագույն մակարդակ ապահովի մեր երկրների տնտեսությունների իրական ոլորտների զարգացման, լոգիստիկ և տրանսպորտային դժվարությունների հաղթահարման, անվտանգության համակարգերի կայունության բարձրացման համար:

Հայաստանը կարող է կամուրջ դառնալ մի կողմից՝ Իրանի և Մերձավոր Արևելքի երկրների, մյուս կողմից՝ ԵԱՏՄ երկրների միջև: Այդ նպատակին

հասնելու համար մեր երկիրը շարունակում է իրականացնել Հյուսիս-հարավ նախագծեր Իրանի սահմանից մինչև Վրաստանի սահման՝ հաշվի առնելով սահմանամերձ Բավրայից մինչև Բաթումի և Փոթի արագընթաց ճանապարհի կառուցումը:

Երկարաժամկետ հեռանկարում եվրասիական ինտեգրման գործընթացների մասնակցությունը կայանաավորի հետևյալը.

1. Հանքային ապրանքների գների հավասարեցում ԵԱՏՄ-ում և ինտեգրման դեպքում արտահանման տուրքերի վերացում, ինչը ակնհայտորեն կնպաստի ՀՆԱ-ի աճին և արտահանմանը:
2. Մատչելի էներգետիկ աղբյուրների, նախևառաջ՝ բնական գազի հասանելիություն, ինչը թույլ կտա առավել սեղմ ժամկետներում ապահովել աճի ներուժը և նշանակալից մրցակցային առավելություններ կտա:

Համաձայն ԵԱՏՄ համաձայնագրի 4-րդ հոդվածի՝ կուտակային ազդեցության հաշվառմամբ ռազմավարական օբյեկտների արդիականացումն ու համագործակցությունը ոչ միայն ուղղակիորեն կնպաստեն ՀՆԱ-ի աճին, այլև զգալիորեն կբարձրացնեն բնակչության զբաղվածությունը: Մեր արտադրանքի ազատ մուտքը ԵԱՏՄ ընդհանուր շուկա պետք է նպաստի հզորությունների օպտիմալ ներբեռնմանը:

Միաժամանակ, հայկական ընկերությունների համար հնարավորություն է բացվում՝ ԵԱՏՄ ողջ տարածքում մասնակցելու պետական գնումների մրցույթներին:

ԵԱՏՄ ինտեգրման պարագայում աճում է Հայաստանի՝ կարևոր տրանսպորտային և տարանցիկ հանգույց դառնալու հավանականությունը: ԵԱՏՄ բոլոր երկրները շահագրգռված են, որպեսզի լինեն երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջանցքներ, նաև՝ էլեկտրացանցեր դեպի Հարավային Ասիա և Մերձավոր Արևելք:

Տարեցտարի ողջ աշխարհում ավելանում է աշխատանքային միգրանտների թիվը ոչ միայն Հայաստանից և հետխորհրդային երկրներից, այլև բոլոր մյուս երկրներից: Միջազգային միգրանտների թիվը, որն այժմ 200 մլն է, կարող է կրկնապատկվել և ըստ կանխատեսումների՝ 2050 թ. հասնել 400 միլիոնի: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը վերջերս հրապարակել է միգրացիայի գլոբալ միտումների մասին ակնարկ: Կազմակերպության փաստաթուղթը կանխատեսում է, որ 2020 թ. բարձրագույն կրթությամբ աշխատուժի հնարավոր պակաս կզգացվի (38-40 մլն): Բարձր որակավորում ունեցող աշխատողների պահանջարկի և առաջարկի միջև ձեղքը, նրանց գնահատմամբ, հավասար կլինի 16-18 միլիոնի: Ցածր որակավորմամբ մասնագետների ավելցուկը կկազմի 32-35 մլն զարգացած երկրներում և 58 մլն՝ Հնդկաստանում և այլ զարգացող երկրներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանից աշխատանքային միգրանտները հարաբերականորեն բարձր որակավորում ունեն, սպասվում է, որ նրանց թիվը նույնպես կաճի՝ միջազգային տնտեսության հիմնական միտումներին համապատասխան:

Նշենք, որ ամեն տարի միջին հաշվով 200 հազ. հայ միգրանտներ սեզոնային աշխատանքի նպատակով մեկնում են Ռուսաստանի Դաշնություն, նրանցից 30-40 հազարը՝ անվերադարձ: Նրանք էլ, 2 միլիոնանոց հայկական Սփյուռքի պես, դրամական փոխանցումներ են կատարում Հայաստան՝ այդպիսով կայուն եկամուտ ապահովելով երկրի բնակչության շուրջ 20%-ին, ինչը զգալի ներդրում է երկրի տնտեսության համար:

Հայաստանի արդյունաբերության հեռանկարային զարգացման ուղղություն է ռազմարդյունաբերական համալիրը, ինչի հետ կապված՝ այժմ ՀՀ Կառավարությունը ձևավորում է Բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերական համալիրի նախարարություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների աճն այդ ոլորտում կազմում է տարեկան 20-22%, այդտեղ գործում են շուրջ 900 ձեռնարկություններ և ստարտափներ: Ընդունվում է նոր օրենսդրություն, որը պետք է խթանի համաշխարհային մակարդակի տեղեկատվական տեխնոլոգիաների խոշորագույն ընկերությունների դուստր ձեռնարկությունների հիմնումը: Սա մեր տնտեսության զարգացման ամենահեռանկարային ուղղությունն է:

ԵԱՏՄ երկրները պետք է միասին զարգացնեն գիտության վերջին նվաճումներին համահունչ տնտեսության ոլորտներ: Եվրասիական տարածքում պետք է զարգանա գիտական և գիտաարդյունաբերական գործունեությունը: Զարգացման եվրասիական բանկը պետք է ֆինանսավորի ժամանակակից ուղղվածության գիտական գործունեություն, գիտական ոլորտներ:

Օգտագործված գրականություն

1. Армения в ЕАЭС: Евразийская экономическая интеграция в действии, Сборник статей, Исследовательско-аналитическая общественная организация «Интеграция и развитие», Ереван, Издательство «Напет», 2018.
2. https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf
3. https://www.armstat.am/file/article/sv_12_14a_411.pdf
4. <https://ru.wikipedia.org/wiki/>
5. <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/Pages/default.aspx>
6. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/radestat/Pages/default.aspx
7. <http://www.noravank.am/upload/pdf/sbornik.pdf>
8. <https://ru.armeniasputnik.am/armenia/20190101/16508767/novye-perspektivy-s-konyakom-i-iranom-itogi-eaehs-dlya-armenii-za-2018-god.html>

МИКАЕЛ МЕЛКУМЯН

Доктор экономических наук, профессор, АГЭУ

Тенденции развития Республики Армения в рамках непрерывной интеграции в ЕАЭС. – Сегодня мы с уверенностью можем сказать, что евразийское сотрудничество - наше настоящее. В 2018 году общий объем товарооборота Армении составил 7.3 млрд. долларов США, из которого экспорт составил 2.4 млрд., а импорт – 4.9 млрд. долларов США. Во внешнем товарообороте самый большой процент составляют страны ЕАЭС.

При интеграции в ЕАЭС вырастает вероятность становления Армении важным транспортным и транзитным узлом. Все страны ЕАЭС заинтересованы в создании железнодорожных и автомобильных транспортных коридоров, а также электросетей в Южную Азию и на Ближний Восток. Так что сочетание наших усилий и возможностей должно максимально гарантировать эффективность развития реального сектора экономики наших стран, преодоление логистических и транспортных трудностей, повышение устойчивости систем безопасности.

Ключевые слова: *евразийский экономический союз, интеграция, соглашения, свободная торговля, единое экономическое пространство.*

JEL: O11, O19

MIKAEL MELKUMYAN

Doctor of Economics, Professor at ASUE

Development Tendencies of the Republic of Armenia within the Framework of EEU Continuous Integration. – Today we can confidently say that Eurasian cooperation is our present. In 2018, the total volume of commodity turnover of Armenia amounted to 7.3 billion US dollars, of which exports amounted to 2.4 billion and import to 4.9 billion US dollars. In the external commodity turnover, the largest percentage is made up of the EAEU countries.

With integration into the EAEU, the likelihood of Armenia becoming an important transportation and transit hub grows up. All EAEU countries are interested in creating railway and road transport corridors, as well as power grids to South Asia and the Middle East. So, the combination of our efforts and opportunities should maximally guarantee the effectiveness of the development of the real sector of economy of our countries, overcoming logistical and transportation difficulties, increasing the sustainability of security systems.

Key words: *Eurasian Economic Union, integration, agreements, free trade, common economic space.*

JEL: O11, O19